Հավելված N 7

Հաստատված է
Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահի
2023 թվականի հունիսի 15-ի
թիվ 267-Ա հրամանով

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԹՌԻՉՔԱՅԻՆ ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) թռիչքային պիտանիության վարչության (այսուհետ՝ Վարչություն) առաջատար մասնագետ (այսուհետ՝ Առաջատար մասնագետ) (ծածկագիրը՝ **22-4-ՔԱԿ-23.1-7**):

1.2. Ենթակա և հաշվետու է

Առաջատար մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Առաջատար մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Աջափնյակ վարչական շրջան, «Զվարթնոց» օդանավակայան:

2. Պաշտոնի բնութագիրը

(**Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**)

2.1. Աշխատանքի բնույթը՝

1. մասնակցում է ՀՀ քաղաքացիական ավիացիայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ու թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպություններում միասնական տեխնիկական քաղաքականության իրականացման վերահսկմանը.
2. կատարում է օդանավերի շահագործման մասին ստացվող տեղեկությունների, թերությունների, պատահարների, միջադեպերի, տեխնոլոգիական խախտումների հետևողական վերլուծություն և մշակում է օդանավերի թռիչքային պիտանիության պահպանման ու հուսալիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ.
3. մասնակցում է տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու տեխնիկական սպասարկման բազային և գծային կայանների, ինչպես նաև թռիչքային պիտանիության պահպանման կազմակերպությունների սերտիֆիկացմանը և դրանց ստուգումներին՝ համաձայն սահմանված կարգի.
4. Կոմիտեի կողմից սահմանված թռիչքային պիտանիության պահպանմանը վերաբերվող պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով մասնակցում է հետևյալ հարցերի ուսումնասիրմանը.

ա. օդանավերի և համալրող արտադրատեսակների ծառայության ժամկետների երկարաձգում,

բ. ավելացված պարբերականությամբ օդանավերի տեխնիկական սպասարկման նոր կանոնակարգերի ներդրում,
գ. օդանավերի, նրա համակարգերի և համալրող արտադրատեսակների սպասարկում՝ ելնելով տեխնիկական վիճակից,
դ. օդանավերի տեխնիկական շահագործման ընթացքում սահմանափակումներ սահմանող կամ վերացնող տեխնիկական որոշումներ.
5. մասնակցում է ՀՀ-ում գրանցված կամ շահագործվող օդանավերի թռիչքային պիտանիության, ինչպես նաև թռիչքային անվտանգության տեսակետից կարևոր համարվող օդանավի պահեստամասերի, հարմարանքների և սարքավորումների ուսումնասիրություններին ու ստուգումներին.
6. անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում նորմատիվ և հրահանգիչ փաստաթղթերում լրացումներ և փոփոխություններ կատարելու համար.
7. իր իրավասության սահմաններում մասնակցում է ՀՀ տարածքում և սահմաններից դուրս շահագործվող, ՀՀ-ում գրանցված օդանավերի թռիչքային պիտանիության ապահովման ստուգումների անցկացմանը.
8. մասնակցում է ՀՀ-ում գրանցված օդանավերի ստուգումներին դրանց թռիչքային պիտանիության վիճակը ուսումնասիրելու նպատակով.
9. մասնակցում է օդանավի գրանցման, թռիչքային պիտանիության, ռադիոկայանի, աղմուկի վկայականների, թռիչքի թույլտվության տրման, դրանց գործողության ժամկետների երկարաձգման, այլ պետության կողմից տրված թռիչքային պիտանիության վկայականի ճանաչման աշխատանքներին.
10. մասնակցում է ՀՀ-ում գրանցված օդանավ շահագործող ընկերությունների ստուգումներին:
11. մասնակցում է օդանավ շահագործողների հայտերի քննարկմանը և հետևյալ գործառույթների իրականացմանը.
ա. օդանավին 24-բիթային հասցեի տրամադրման վերաբերյալ ուսումնասիրություն.
բ. RVSM կրճատ ուղղաձիգ տարանջատման մինիմումի պայմաններում թռիչքների իրականացման վերաբերյալ ուսումնասիրություն.
գ. RNAV օդային ուղիներով թռիչքներ իրականացնելու վերաբերյալ ուսումնասիրություն.
դ. ELT վթարային ռադիոփարոսների գրանցում «ԿՈՍՊԱՍ-ՍԱՐՍԱՏ» համակարգի տվյալների վերաբերյալ ուսումնասիրություն.
12. մասնակցում է թռիչքային պիտանիության դիրեկտիվների մշակմանը՝ ՀՀ-ում գրանցված օդանավերի թռիչքային պիտանիության և թռիչքների անվտանգության ապահովման նպատակով.
13. մասնակցում է կազմակերպությունների օդանավ շահագործողների հատուկ դրույթների ուսումնասիրությանը.
14. մասնակցում է ՀՀ օդանավ շահագործողների կողմից ներկայացվող թռիչքային պիտանիության պահպանմանը վերաբերվող ձեռնարկների ուսումնասիրությանը.
15. մասնակցում է ավիաընկերություններում թռիչքակիրներից ստացված տեղեկատվության ամբողջականության և որակի ընտրովի ուսումնասիրությանը՝ օդանավերի թռիչքային պիտանիության պահպանման վերաբերյալ վերլուծության նպատակով:

Կոմպետենցիա պահանջող գործառույթները կիրառելի են համապատասխան կոմպետենցիան հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

2.2. Իրավունքները՝

- իր իրավասության սահմաններում մասնակցել ավիացիոն տեխնիկայի թռիչքային պիտանիության, տեխնիկական շահագործման և վերանորոգման բնագավառում քաղաքացիական ավիացիայի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ ակտերի, հրահանգների, կարգադրությունների և այլ հրահանգիչ փաստաթղթերի մշակմանը, ինչպես նաև վերահսկել դրանց կատարումը բոլոր շահագործողների կողմից.
- սահմանված կարգով Վարչության պետին առաջարկություն ներկայացնել կասեցնելու քաղաքացիական օդանավերի շահագործումը՝ թռիչքների անվտանգությանը և թռիչքային պիտանիությանը սպառնացող թերությունների բացահայտման դեպքում.
- Կոմիտեի կամ Վարչության առաջադրանքներով մասնակցում է ՀՀ տարածքում և արտասահմանում ավիացիոն տեխնիկայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների, տեխնիկական սպասարկման գծային կայանների, օդանավ շահագործող կազմակերպությունների ստորաբաժանումների և ներկայացուցչությունների կողմից օդանավերի տեխնիկական սպասարկման աշխատանքների վերաբերյալ սահմանված նորմերի պահանջների կատարման հսկողությանը (ստուգում) և ստանում այդ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ:
- առաջարկություններ տալ սարքավորումների նվազագույն ցանկի MEL (թույլատրելի անսարքությունների նվազագույն ցանկի) նորմերից շեղման դեպքերում օդանավերի հնարավոր շահագործման մասին.

2.3.Պարտականությունները՝

- հսկողություն սահմանել ՀՀ օդանավ շահագործողների և տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման կազմակերպությունների կողմից օդանավերի տեխնիկական սպասարկման և թռիչքային պիտանիության պահպանման աշխատանքների նկատմամբ՝ սահմանված նորմերի պահանջների կատարմամբ.
- ձևակերպել ՀՀ օդանավ շահագործողների տեխնիկական սպասարկման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպությունների ու գծային կայանների սերտիֆիկացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը.
- մշակել Վարչության խնդիրներին և գործառույթներին վերաբերող կարգեր ու նորմատիվային փաստաթղթեր.
- ուսումնասիրությունների և տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ տալ համապատասխան տեղեկատվություն և ձեռնարկել թերությունները վերացնելուն ուղղված համապատասխան գործողություններ.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն ավիացիոն կամ տեխնիկական կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

1) ունի իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
2) տիրապետում է թռիչքային պիտանիությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությանը.
3) անգլերեն լեզվի իմացություն, որը թույլ է տալիս աշխատել Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) և այլ միջազգային կազմակերպությունների փաստաթղթերի և տեխնիկական գրականության հետ.
4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) ունի անհրաժեշտ գիտելիքներ ՀՀ քաղաքացիական ավիացիայում շահագործվող օդանավերի, թռչող ապարատների և շարժիչների թռիչքային պիտանիության ու տեխնիկական շահագործման կանոնների և կառուցվածքի, դրանց տեխնիկական սպասարկման ծրագրերի և մեթոդների վերաբերյալ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում: